Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. ապրիլի 23-ից 25-ը

4. Հրավիրող կողմը

Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 24-րդ նիստի աշխատանքներին

6. Քննարկված թեմաները

- ԱՊՀ անդամ-պետությունների ինովացիոն համագործակցության միջպետական ծրագրի (մինչև 2020թ.) իրականացման ընթացքը,
- ԱՊՀ տարածաշրջանում գրադարանային միացիալ GRID ցանցի ստեղծում,
- գիտական հիմնարկների տարակարգման հայաստանյան մոդել,
- միջպետական պիլոտային ծրագրերի (մինչև 2020թ.) իրականացման ընթացքը,
- և այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 24-րդ նիստի օրակարգի 11-րդ կետով նախատեսված էր ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանի ելույթը՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում գիտության և ինովացիոն ոլորտներում իրականացվող բարեփոխումներին և նշված ոլորտների կայուն զարգացումն ապահովելու նպատակով հետագա քայլերի հաջորդականությանը: Սամվել Հարությունյանի զեկուցումից առաջ Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի նախագահ, Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Շումիլինն իր արտահերթ ելույթում նշեց, որ վերոնշյալ նիստը տեղի է ունենում 2019թ. ապրիլի 24-ին և անհրաժեշտ է հիշել, որ 104 տարի առաջ այս օրը տեղի է ունեցել Հայոց ցեղասպանություն, որի փաստը ժխտելու և չընդունելու շատ երկրների քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ հետագայում՝ 20-րդ դարում տեղի ունեցան այլ ցեղասպանություններ ևս: Ելույթում Ալեքսանդր Շումիլինը նշեց, որ հայ ժողովուրդը համաշխարհային քաղաքակրթությանը մեծ արժեքներ տված աշխարհի հնագույն ժողովուրդներիցն մեկն է, և դատապարտեց 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության կազմակերպման համար: Իր խոսքի վերջում Ալեքսանդր Շումիլինն առաջարկեց մեկ րոպե լռությամբ հոտընկայս հարգել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումները, ինովացիոն ոլորտի զարգացման գործընթացը և մոտեցումները: Արծարծվեց նաև Հայաստանում անկախ փորձաքննական համակարգի խնդիրը: Սամվել Հարությունյանը մանրամասն ներկայացրեց համակարգի սկզբունքները, որոնք այն դարձնում են առավել օբյեկտիվ՝ նշելով, որ

- յուրաքանչյուր հայտ անցնում է կրկնակի փորձաքննություն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում,

- ամբողջ գործընթացն իրականացվում է առցանց (online):

Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի անդամներին հետաքրքրեց նաև Հայաստանում մշակված և արդեն իսկ հաստատված գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման և տարակարգման սկզբունքների ու չափանիշների մեթոդաբանությունը: Սամվել Հարությունյանը ներկայացրեց վերոնշյալ համակարգի սկզբունքներն ու առավելությունները, որից հետո ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչները խնդրեցին հնարավորություն ընձեռել վերոնշյալ համակարգն ուսումնասիրելու և սեփական երկրներում կիրառելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2020 թվականի սեպտեմբերին Ծաղկաձորում անցկացնել «Գիտություն և ինովացիա» խորագրով գիտական սեմինար և Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցելու են Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի անդամները, ԱՊՀ անդամ պետությունների գիտնականներն ու գործարար աշխարհի ներկայացուցիչները:

Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի (РУДН) ներկայացուցիչները Սամվել Հարությունյանի համաձայնությունն են ստացել 2019թ. նոյեմբերին Մոսկվայում կայանալիք «Գիտաչափական ուսումնասիրություններ» խորագրով սեմինարին պլենար զեկուցումով հանդես գալու և ներկայացնելու Հայաստանում գործող գիտաչափական համակարգը, ինչպես նաև գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման և տարակարգման սկզբունքների ու չափանիշների մեթոդաբանությունը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի առաջարկությունները, որոնք ձևակերպվել են վերոնշյալ նիստի արձանագրության (կցվում է) 12-րդ կետում.

- ԱՊՀ անդամ պետությունների անկախ փորձաքննական միացյալ համակարգի ստեղծում՝ Հայաստանի անկախ փորձաքննական համակարգի հենքի վրա: Նոր համակարգը կբերի նրան, որ ԱՊՀ տարածաշրջանում հատկապես համագործակցային ծրագրերն առավել օբյեկտիվ կերպով կենթարկվեն փորձաքննության և փորձագետների համատեղ օգտագործումը կտա առավելագույն արդյունքներ,
- ԱՊՀ տարածաշրջանում գրադարանային միացիալ GRID ցանցի ստեղծում,
- ԱՊՀ անդամ պետությունների համար ընդհանուր օգտագործման գիտական կենտրոնների/սարքավորումների միասնական համակարգի ստեղծման և համատեղ օգտագործման կանոնակարգի մշակում,
- ԱՊՀ անդամ պետությունների գիտատեխնիկական ամսագրերի գնահատման համակարգի չափանիշների համապատասխանեցում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

30.04.2019թ.